**Շահումը որոշելու կարգը, շահումների վճարման վայրը, կարգը և ժամկետը**

1.Ակնթարթային մասի կազմակերպման և անցկացման նկարագիրը:

**Տոմսի՝ ակնթարթային մասով շահումը որոշելու կարգը:**

Տոմսի վրա առկա է թվով երկու խաղադաշտ՝ «Հաջողակ սիմվոլներ» և «Շահում»:

«Հաջողակ սիմվոլներ» դաշտը բաղկացած է 8 խաղավանդակից, որոնց պաշտպանիչ շերտերի տակ կարող են հանդիպել հետևյալ սիմվոլները՝ « » (դրամ), « » (յոթ), « » (պայտ), « » (բալ), « » (ժպիտ), « » (աստղ), « » (երեքնուկ), « » (նվեր) կամ « » (ադամանդ) :

«Շահում» խաղադաշտը բաղկացած է պաշտպանիչ շերտով ծածկված 1 (մեկ) խաղավանդակից, որում առկա է գումարային մեծություն արտահայտող թիվ կամ որևէ իրի անվանում կամ TV1-TV12 նշագրումներից որևէ մեկը:

Տոմսի՝ ակնթարթային մասով շահումը որոշելու համար մասնակիցը պետք է ջնջի «Հաջողակ սիմվոլներ» և «Շահում» խաղադաշտերի բոլոր խաղավանդակները: Եթե «Հաջողակ սիմվոլներ» խաղադաշտում հայտաբերվի առնվազն 3 հատ նույն սիմվոլը, ապա կհամարվի որ տոմսը շահել է, իսկ շահումը կկազմի «Շահում» խաղադաշտում նշված գումարը կամ իրը:

Վերոնշյալ պայմանով տոմսը կարող է ունենալ միայն մեկ շահում:

Եթե «Շահում» խաղադաշտում հայտնաբերվի TV1-TV12 նշագրումներից որևէ մեկը, ապա տոմսն իրավունք ձեռք կբերի մասնակցել խաղարկությանը:

Մնացած բոլոր դեպքերում տոմսը համարվում է չշահած:

**2.Խաղարկության մասի կազմակերպման և անցկացման նկարագիրը**

«Շանս» վիճակախաղի խաղարկությունը իրականացվելու է 1-ից 12 թվերով համարակալված խաղաքարերով, որոնք ստուգվում և լցվում են հատուկ չթափանցող պարկի մեջ, որի դատարկ լինելը հավաստում են տվյալ վիճակահանության հանձնաժողովի անդամները: Վիճակահանությունն իրականացնելու համար պարկից հաջորդաբար հանվում է մեկ խաղաքար: Խաղարկությունում շահում է այն տոմսը կամ տոմսերը, որում (որոնցում) «TV» գրառման կողքի թիվը համընկնում է պարկից հանված խաղաքարի թվի հետ: Եթե պարկից հանված խաղաքարով շահում չգրանցվի, ապա խաղաքարեր հանելը կշարունակվի այնքան, մինչև, վերը նշված պայմանով կգրանցվի շահում: Խաղարկության համար կազմակերպիչը կնախատեսի շահումային ֆոնդ, որը հավասարաչափ կբաշխվի վերոհիշյալ կարգով շահած տոմսերի միջև:

«Շանս» վիճակախաղի խաղարկությունը կանցկացվի տարեկան առավելագույնը երկու անգամ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**3.**Տոմսը ենթակա չէ վճարման, եթե՝

ա. Տոմսն էականորեն վնասված է: Վնասվածքը համարվում է էական, եթե բացակայում է տոմսի որևէ հատված (այսինքն՝ տոմսն ամբողջական չէ):

բ. Կազմակերպչի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ խախտված է տոմսի՝ շահելու պատահականության սկզբունքը, այսինքն՝ տոմսի վրա կատարվել է ֆիզիկա-քիմիական մեթոդների կամ տեխնիկական միջոցների կիրառում կամ ներկայացված տոմսը կեղծված է (առաջացնում է պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ):

գ. Մաքրված է տոմսի «Չջնջել» նշագրումով դաշտը:

**4.** Ակնթարթային մասի շահումները կտրվեն մինչև խաղարկության մասի շահումների վճարման վերջին օրը ներառյալ:

Խաղարկության մասի շահումները կտրվեն խաղարկության կայացման հաջորդ օրվանից սկսած՝ 30 օրվա ընթացքում:

Շահումները կտրամադրվեն՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 26, իսկ մանր (մինչև 20000 ՀՀ դրամ) շահումները նաև՝ ք.Երևան՝ Կոմիտասի 41, Գայի 15/10, Բագրատունյաց 7, Մաշտոցի պողոտա 7/14, Տ. Պետրոսյան 5/6, Մարգարյան 16, Անդրանիկի 73/2, Ռուբինյանց 18/4, Օհանովի 7/2, Կիևյան 4, Շիրազի 32 հասցեներից, «Հայ Փոստ» ՓԲԸ-ի, «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի և «Դիջիսեյլս» ՍՊԸ-ի իրացման կետերից, որոնց գտնվելու վայրերը (հասցեները) նշված են https://rules.totogaming.am կայքի «Վիճակախաղերի շահումների վճարման վայրեր» բաժնում, որում նշված տեղեկատվությունը համարվում է «ՇԱՆՍ» վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգի անբաժանելի մասը:

Անհրաժեշտության դեպքում շահող մասնակիցը պարտավոր է ներկայացնել անձնագիր կամ օրենքով նախատեսված անձը հաստատող այլ փաստաթուղթ:

5. Տոմսում չներառված մնացած պայմանները կարգավորվում են «Շանս» վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգով, համաձայնեցված ՀՀ Ֆինանսների նախարարության հետ:

«Շանս» N 5 վիճակախաղի խաղարկությունը կկայանա ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 26 հասցեում 25.02.2022թ., ժամը 22:00–ին, որը կհեռարձակվի (կհրապարակվի) https://www.youtube.com (Արմենիա Լոթերի (Armenia Lottery) ալիքով) ինտերնետային կայքով:


Վիճակախաղի կազմակերպիչ՝ «ԴԻՋԻԳԵՅՄ»
Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն

ARMENIA LOTTERY “Armenia Lottery” «Արմենիա Լոթերի»

060 67 22 22


**Գինը՝ 400 դրամ** **ISL 0410**

4 850012 310606